2330

# DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
## ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

BISHOP KHAJAG BARSAMIAN, PRIMATE

Թիւ 925
Մայիս 28, 1992

Ազնուափայլ
Տիկին Ֆլորանս Գարօղլանեան
Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ
Ծխական Խորհուրդի Ատենապետուհի
Ռիչմընտ Հայթց.

Ազնիւ Տիկին Գարօղլանեան,

Ստացած ենք համայնքիդ Անդամական ժողովի տեղեկագիրները եւ ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական ժողովը գումարուած է Փետրուար 23, 1992-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդին չորս անդամներ։ Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը։

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Հայկ Արփանեան
Արա Պաղտասարեան
Սերոբ Տէմիրճեան
Ֆլորանս Գարօղլանեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը։

Կ՚օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը։ Մեր մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ։

Սիրոյ ողջունիւ

Խաժակ Եպս. Պարսամեան
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, NY 10016-4885 TELEPHONE 212.686.0710 FAX 212.779.3558